



# ՄՈՒՐԲ ՅԱԿՈՐ

## ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԵՄ ԿԵՂԵՅԻ



### ԽԱՉԿԵՐԱՅԷՆ ԵՏԲ Ա. ԿԻՐԱԿԻ

20 ՍԵՊԵՏԵՄԲԵՐ 2009

Կիրակնօրեայ ընթերցումներ	էջ 1
Արթնութիւն	էջ 2
Ծանուցում	էջ 4

**ԸՆԹԵՐՑՈՒՄ**  
**ԵՍԱՅԻ ՄԱՐԳԱՐԷԻ ԳՐՔԷՆ**  
 (14.3-17)

Այն օրը Տէրը վերջ պիտի դնէ քու ցաւերուդ, նեղութիւններուդ եւ գերութեան անտանելի ծառայութեանդ, եւ պիտի հանգստացնէ քեզ: Այն օրը հետեւեալ ողբանման առակը պիտի կարդաս Բաբելոնի թագաւորին վրայ, ըսելով.-

«Ինչպէ՛ս կորսուեցաւ բռնաւորը, ինչպէ՛ս կորսուեցաւ աշխարհը ցնցողը: Ահաւասիկ Տէրը խորտակեց մեղաւորներուն լուծը, լուծը իշխաններուն, եւ անխնայ եղաւ անոր հանդէպ՝ որ կատաղի մոլեգնութեամբ եւ անտանելի տանջանքներով ազգերը կը կոտորէր: Ամբողջ աշխարհը խաղաղեցաւ եւ հանգստացաւ. մարդիկ ուրախութեամբ կ'աղաղակէն: Լիբանանի եղեւիններն ու մայրիներն ալ կը ցնծան եւ կ'ըսեն. «Այն օրէն որ դուն կորսուեցար՝ ո՞նէ փայտահատ չեկաւ մեզ կտրելու»: Դժոխքն իսկ տակնուվրայ եղաւ, երբ դուն հոն իջար. միանգամայն ելան կանգնեցան աշխարհակալ բոլոր հսկաները, որոնք ազգերու թագաւորները իրենց աթոռներէն վար ձգած էին: Բոլորը միասին ըսին քեզի. «Դո՛ւն ալ մեզի պէս բռնուեցար եւ մեր վիճակին ինկար: Քո՛ւ ալ փառքդ գերեզման իջաւ եւ ուրախութիւնդ թաղուեցաւ: Այսուհետեւ ցեցերը քեզի ներքնակ պիտի ըլլան, իսկ որդերը՝ վերմակ»:

Ինչպէ՛ս ինկար երկինքէն, ո՛վ Արուսեակ, որ առաւօտուն կը ծագէիր. ինչպէ՛ս գետինն հաւասարեցար, դուն՝ որ բոլոր ազգերը ոտքի տակ առած էիր: Մտքէդ կ'ըսէիր. «Երկինք պիտի ելլեմ. բոլոր աստղերէն վեր պիտի հաստատեմ աթոռս, պիտի նստիմ հիւսիսի

այն բարձր լեռան վրայ որ աստուածներու ժողովատեղին է. ամպերէն աւելի վեր պիտի բարձրանամ եւ Բարձրեալին պիտի նմանիմ»: Բայց ահա դժոխք իջար, երկրի ընդերքը: Քեզ տեսնողները պիտի զարմանան եւ ըսեն. «Մա՞ է այն մարդը որ աշխարհը կը դողացնէր եւ թագաւորները կը տապալէր. ան՝ որ ամբողջ աշխարհը աւերակի կը վերածէր, քաղաքները կը քանդէր եւ իր գերիները բնաւ իրենց տունները չէր դարձրներ»»:

**ՊՕՂՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ**  
**ԿՈՐՆԹԱՑԻՆԵՐՈՒՆ ԳՐԱԾ ԵՐԿՐՈՐԳ**  
**ՆԱՄԱԿԷՆ**  
 (10.18-11.10)

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի: Սակայն, յուսամ քիչ մը ներողամիտ կ'ըլլաք եթէ անմտօրէն ես ալ պարծենամ, ըրածներս յիշեցնելով ձեզի: Իսկ դուք համբերութեամբ լսեցէք:

Ես ձեզի հանդէպ Աստուծոյ նախանձախնդրութեամբ լեցուած՝ կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ: Բայց կը վախնամ որ ձեր միտքը ապականի եւ հեռանաք Քրիստոսի հանդէպ ամբողջական եւ մաքուր նուիրումէն, ճիշդ ինչպէս Եւան խաբուեցաւ օձին խորամանկ սուտերէն: Կը վախնամ որ նոյնքան դիւրութեամբ ընդունիք ո՞նէ մէկը որ մեր քարոզածէն տարբեր փրկիչ մը, ձեր ստացած Հոգիէն տարբեր Հոգի մը, կամ ձեր ընդունած

Իսկական ընտրուածը ան չէ՛ որ ինքզինք կը գովէ, այլ ան՝ որ Տիրոջ կողմէ կը գովուի:

Կ'ուզեմ, որ միայն Քրիստոսը սիրէք, ինչպէս մաքուր կոյս մը որ իր սէրը կը վերապահէ անոր՝ որ իր ամուսինը պիտի ըլլայ:

Աւետարանէն տարբեր աւետարան մը կը քարոզէ ձեզի:

Ձեմ գիտեր թէ ես ձեր այդ նշանաւոր “առաքեալ”ներէն բանով մը ետ կը մնա՞մ: Թէպէտ ճարտար խօսող մը չեմ, բայց խօսածս գիտեմ: Եւ կարծեմ ատիկա ապացուցանեցի ձեզի ամէն ինչով: Արդեօք սխալ ըրի որ Աստուծոյ Աւետարանը ճրիօրէն քարոզեցի ձեզի եւ ինքզինքս խոնարհեցուցի՝ ձեզ բարձրացնելու համար: Ձեւով մը միւս եկեղեցիները կողոպտեցի, ապրուստս անոնցմէ առնելով, որպէսզի ձեզի ծառայեմ ճրիօրէն: Ձեր քով եղած ատենս նոյնիսկ երբ կարիքի մէջ եղայ՝ ձեզմէ ոեւէ մէկուն բեռ չեղայ. Մակեդոնիայէն եկած եղբայրները հոգացին պէտքերս: Եւ ինչպէս անցեալին զգուշացայ, ասկէ վերջ եւս ամէն կերպով պիտի զգուշանամ ձեզի բեռ ըլլալէ: Բայց Քրիստոսի ճշմարտութեամբը, որ իմ ներսիդիս է, կ'ըսեմ՝ թէ այս բաներով պիտի պարծենամ ամբողջ Աքայիայի մէջ, բոլորին պատմելով:

**ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ ԸՍՏ ՄԱՐԿՈՍԻ**

(10.1-12)

Յիսուս կափառնայումէն Հրէաստանի կողմերը եկաւ՝ Յորդանան գետին միւս կողմէն անցնելով: Դարձեալ խուռն բազմութիւն մը իր շուրջը հաւաքուեցաւ, եւ Յիսուս սկսաւ անոնց ուսուցանել իր սովորութեան համաձայն:

“Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”:

Փարիսեցիները զինք փորձեցին նպատակով մօտեցան իրեն եւ հարցուցին. «Ոեւէ մէկը իրաւունք ունի՞ իր կինը արձակելու»: Յիսուս պատասխանեց. «Մովսէս ձեզի ի՞նչ պատուիրեց»: Անոնք ըսին. «Մովսէս արտօնեց բաժանման թուղթ տալ կնոջ եւ արձակել զայն»: Յիսուս ըսաւ. «Մովսէս ձեր անհանդուրժող նկարագրին պատճառով այդ

օրէնքը սահմանեց ձեզի: Մինչդեռ սկիզբէն, ստեղծագործութեան ժամանակ, Աստուած արու եւ էգ ստեղծեց մարդիկը եւ ըսաւ. “Այս պատճառով այրը պիտի ձգէ իր հայրն ու մայրը եւ իր կնոջ միացայ, եւ երկուքը մէկ մարմին պիտի ըլլան”: Հետեւաբար այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ոեւէ մէկը թող

չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

Երբ տուն դարձան, աշակերտները նոյն նիւթին մասին դարձեալ հարցուցին: Յիսուս անոնց պատասխանեց. «Եթէ այրը արձակէ իր կինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ անոր դէմ: Նոյնպէս ալ, կինը եթէ ձգէ իր ամուսինը եւ ուրիշ մը առնէ՝ շնութիւն ըրած կ'ըլլայ»:

... այլեւս երկու չեն, այլ մէկ մարմին: Ուստի ոեւէ մէկը թող չբաժնէ անոնք որ Աստուած միացուց»:

**ԱՐԹՆՈՒԹԻՒՆ**  
Գառնի Բ. Գ.

Յաճախ հոգեւոր արթնութեան կոչեր կը լսենք:

Ո՞վ արթուն է հոգեւորապէս:

Նախ սա ըսեմ, որ Աստուածաշնչական հասկացողութեան մէջ, արթուն ըլլալը՝ գիտակից ըլլալը չէ: Արթուն ըլլալը հոգեւոր վիճակ մըն է, աւելի ճիշդ լինելութիւն մըն է. իսկ գիտակից ըլլալը՝ հոգեկան լինելութիւն մըն է: Առաջինը հոգեւոր երեւոյթ է, իսկ երկրորդը՝ հոգեկան:

Ո՞վ արթուն է: Սակայն ի՞նչ կը նշանակէ արթուն ըլլալ:

Մարգարէին բերնով Աստուած կոչ կ'ուզէ եւ կ'ըսէ. «Արթնցի՛ր, արթնցի՛ր, քու զօրութիւնդ հազիր, ո՛վ Սիոն: ...Իմ ժողովուրդս պիտի գիտնայ իմ անունս» (Ես 52.1,6): Ուրեմն, արթնալը կապուած է Տիրոջ անունը գիտնալուն: Եւ հետեւաբար՝ արթուն է ան՝ որ Տիրոջ անունը գիտէ:

Բայց ինչպէ՞ս հասկնալ այս գիտութիւնը: Ո՞ր կրնանք բացատրութիւն մը գտնել:

Աստուածաշունչին մէջ առաջին տեղը ուր Աստուծոյ անունը կը յայտնուի՝ Մովսէսի կոչման զրուակին մէջն է:

Աստուած մորենիին մէջէն կը կանչէ Մովսէսը եւ զայն կը լծէ երբայեցի ժողովուրդը Եգիպտոսէ դուրս հանելու առաքելութեան: Այդ կոչման պահուն Աստուած Մովսէսի կ'ըսէ. -

...եկո՛ւր, քեզ Փարաւոնին զրկեմ, որ իմ

ժողովուրդս՝ Իսրայելի որդիները Եգիպտոսէն հանես:

Մովսէս Աստուծոյ կ'ըսէ.-

Ես ո՞վ եմ, որ Փարաւոնին երթամ ու Իսրայելի որդիները Եգիպտոսէն հանեմ:

Տէրը կը պատասխանէ.-

Անշուշտ ես քեզի հե՛տ պիտի ըլլամ եւ ա՛յս ըլլայ նշան՝ որ ես քեզ ղրկեմ եմ. երբ ժողովուրդը Եգիպտոսէն հանես, այս լերան վրայ պիտի պաշտէք Աստուած:

Ապա Մովսէս Աստուծոյ կ'ըսէ.-

Երբ ես երթամ Իսրայելի որդիներուն ու ըսեմ անոնց՝ «Ձեր հայրերուն Աստուածը զիս ձեզի ղրկեց»: Եւ երբ ինծի ըսեն՝ «Ի՞նչ է անոր անունը», ի՞նչ ըսեմ անոնց:

Աստուած կը պատասխանէ.-

Ես եմ Որ էն (Ելք 3.10-14):

Այս խօսակցութենէն մեզի կը յայտնուի, թէ Տիրոջ անունը գիտնալը կապուած է գերութենէ ազատագրութեան եւ Աստուծոյ պաշտամունքին: Ծանօթ է, որ Եգիպտոսէ ազատագրութիւնը պիտի առնէր մեղքերէ ազատագրութեան նշանակութիւն:

Արդ, Տիրոջ անունը գիտցողը ան է, որ տեւաբար ընթացքին մէջ է մեղքերէ ազատագրութեան եւ ինքզինք նուիրած է զԱստուած պաշտելու:

Եսայի մարգարէ ըսած է. «Քու անունդ կանչող չկայ, որ արթննայ ու քեզմէ ոյժ առնէ» (Ես 64.7): Ի՞նչ է ըսուածը: Ինչպէ՞ս կարելի է զԱստուած պաշտել, երբ մէկը արթուն չէ: Պարզ է. մարգարէին խօսքը բառացիօրէն պէտք չէ առնել: Խորունկ է անոր իմաստը: Հոգեւոր արթնութիւնը կու գայ Աստուծոյ պաշտամունքին մէջ. ան որ զԱստուած կը պաշտէ՝ կ'արթննայ: Ուրեմն, պաշտամունքը արթնացման գործընթաց մըն է, նաեւ զօրացման:

Իսկ ինչպէ՞ս կ'ըլլայ Աստուծոյ պաշտամունքը: Անիկա միայն ծիսական կանոններուն եւ կարգերուն յարգո՞ւմ է: Ո՛չ: Ովսէի մարգարէութեան մէջ ըսուած է. «...ես ողորմութիւն կ'ուզեմ եւ ոչ թէ գոհ» (Ովս 6.6): Ամէն պաշտամունք որ ընկերային ծառայութեան եւ արդարութեան վրայ չի հիմնուիր՝ ի սկզբանէ մերժուած է Աստուծոյ կողմէ: Անշուշտ Աստուծոյ վայել են ծիսական գեղեցկագոյն արտայայտութիւններ: Բայց եթէ անոնցմէ առաջ եւ զանոնք հիմնաւորող ընկերային ծառայութիւնը եւ արդարութիւնը չկան՝ օգուտ չեն բերեր անոնք, այլ միայն սին

հպարտութիւններ կը սնուցանեն:

Սաղմոսին մէջ կը կարդանք. «Ես արդարութեամբս պիտի տեսնեմ երեսդ, երբ արթննամ՝ տեսքովդ պիտի կշտանամ» (Սղ 17.15): Անկարելի է Աստուծոյ երեսը տեսնել՝ առանց արդար վարքի: Սաղմոսի այս խօսքը սերտօրէն կապուած է Ովսէ մարգարէին բերնով՝ ողորմութեան կոչին: Նոյնպէս կապուած է Պօղոս առաքեալի յորդորին, որ կ'ըսէ.-

Ոեւէ մէկուն որեւէ բանով պարտական մի՛ մնաք. միմիայն իրար սիրելու պարտաւորութիւնը ունեցէք, քանի որ իր ընկերը սիրողը կատարած կ'ըլլայ Աստուծոյ Օրէնքը: Որովհետեւ Աստուծոյ պատուիրանները՝ «Մի՛ շնար, մի՛ սպաններ, մի՛ գողնար, սուտ վկայութիւն մի՛ ըներ, մի՛ ցանկար» եւ միւս բոլորը, խտացած են սա միակ պատուիրանին մէջ. «Մի՛րէ՛ ընկերդ քու անձիդ պէս»: Ով որ իր ընկերը կը սիրէ, չարիք չ'ըներ անոր» (Հու 14.8-10):

Բայց կարելի՞ է միշտ արթուն ըլլալ:

Երգերու Երգին մէջ խօսեցեալ աղջիկը կ'ըսէ. «Ես կը քնանամ, բայց իմ սիրտս արթուն է: Ահա իմ սիրականիս ձայնն է» (Երգ 5.2): Ուրեմն, մէկը կրնայ քունի մէջ ըլլալ, սակայն իր սիրտը արթուն կրնայ մնալ: Որո՞ւն սիրտն է, որ արթուն կը մնայ: Սիրահարին:

Եբրայական եւ քրիստոնէական մեկնաբանութեան մէջ Երգերու Երգին տրուած նշանակութիւնը ծանօթ է: Եբրայական մեկնաբանութեան մէջ խօսեցեալ աղջիկը «ընտրեալ ժողովուրդն» է, իսկ խօսեցեալ տղան՝ Աստուած: Քրիստոնէական մեկնաբանութեան մէջ, աղջիկը՝ եկեղեցին է, իսկ տղան՝ Քրիստոս: Հետեւաբար, երբ մէկը սիրահարուած է Աստուծոյ կամ Քրիստոսի՝ անոր սիրտը արթուն կը մնայ, եւ շատ շուտ կը լսէ իր «սիրական»ին ձայնը:

Արթունը Տիրոջ սիրահարուած է, եւ անոր ձայնը լսելով՝ կ'ելլէ, կ'երթայ դուռը կը բանայ...

Արթունը չի յուսահատիր, երբ դուռը բանալէ ետքը՝ իր սիրածը մեկնած գտնէ: Չի յուսահատիր՝ որովհետեւ խորապէս կը զգայ անոր սէրը, անոր բաղձանքը իր անձին հանդէպ (Երգ 7.10):

Արթնութիւնը մնայուն սիրահարութիւն է Աստուծոյ կամ Քրիստոսի:

Արթունը Տիրոջ սիրահարուած է, եւ անոր ձայնը լսելով՝ կ'ելլէ, կ'երթայ դուռը կը բանայ...

ԵՐԵՍՆՕՐԵԱԿ

Հրագւշարթ, 24 Սեպտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Հաբաթ, 26 Սեպտեմբեր 2009

**Ս. Գեորգ Զօրագար**

Կրոնար, 27 Սեպտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւշարթ, 01 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 04 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւշարթ, 08 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 11 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւշարթ, 15 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 18 Հոկտեմբեր 2009

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ

Հրագւշարթ, 22 Հոկտեմբեր 2009

11.00 Աղօթածողով՝

Քոյրերու ժողով

Կրոնար, 25 Հոկտեմբեր 2009

**Գրիգ Սուրբ Խաչ**

09.30 Ժամերգութիւն

11.00 Ս. Պատարագ



**ՀՈՎԻԲԸ**

**ԸՆՏԱՆԻՔՆԵՐՈՒՄՆ ՄԷՁ**

Անոնք որ կը փափաքին  
հովիւին այցելութիւնը ունենալ  
իրենց տունէն ներս,  
թող բարեհաճին դիմել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի,  
հեռաձայնելով 514 331 5445 x203  
կամ՝ 514 909 5203 թիւերէն մէկուն:

**ԶԵՐ ԶԱՒԱԿՆԵՐԸ  
ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑ  
ՈՒՂԱՐԿԵՏԵ՛Ք**

ամէն Կիրակի  
ժամը 10.30-13.00

Յաւելեալ տեղեկութիւններու  
համար դիմել տնօրէնին՝  
Պրն. Թորոս Պապիկեանին  
հեռ. 514 956 1277

**ՀԻՒԱՆՈՒՆԵՐՈՒ ԱՅՅԵՂՈՒԹԻՒՆ**

Բարեհաճեցէք հեռաձայնել  
Տ. Գառնիկ Քինյ. Գոյունեանի.  
514 331 5445 x203 կամ 514 909 5203